

Համաձայնեցված է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Դ. Զաղոյան

20 օգոստոս 2002 թ.

19 օգոստոս 2002 թ. N 229-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌԻ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՄՍԻ ԵՎ
ՄՍԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՄԱՆ (ԲՆԱԿԱՆ
ԿՈՐՄԱՆ) ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ. ապրիլի 29-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- Ուժը կորցրած ճանաչել ՀՀ գյուղնախարարի 2002 թ. հուլիսի 4-ի N 188 հրամանը:
- Հաստատել «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող մսի և մսամթերքի պահպանման ժամանակ առաջացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը» (հավելվածը կցվում է):
- Նախարարության սննդի և վերամշակող արդյունաբերության գլխավոր վարչությանը (Մ. Գրիգորյան)` յոթնօրյա ժամկետում «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող մսի և մսամթերքի պահպանման ժամանակ առաջացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը» ներկայացնել ՀՀ պետական եկամուտների նախարարություն՝ համաձայնեցման և ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման, համաձայն «Բրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի:
- Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ L. Ռուխլյանին:

ԶԱՓԵՐ

ՀԱՐԿՍԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՍՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՄՍԻ ԵՎ
ՄՍԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍԻ (ԲՆԱԿԱՆ
ԿՈՐՍԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ ակտը մշակված է հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածը և սահմանում է մսի և մասմթերքի պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:

2. Մսի և մասմթերքի պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ դրանց որակական ու քանակական պարամետրերի փոփոխություններից (պակասորդից) առաջացած կորուստների:

3. Բնական կորուստներին չեն դասվում մսի և մասմթերքի պահպանման ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

II. ՄՍԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍԻ ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՄԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄՔ))

1. Սպանդից անմիջապես հետո բնական պաղեցման կամ սառնարանում մինչև 4 աստիճան ցելսիուսի սառեցման ժամանակահատվածում

- տավարի մսի (երկատված, քառատված կամ մասնագիտացված մսեղիքով) - 1.6 տոկոս

- ոչխարի և այծի մսի (ամբողջական կամ երկատված մսեղիքով) - 1.7 տոկոս

- խոզի մսի (ամբողջական կամ երկատված մսեղիքով, խոճկոր) - 1.5 տոկոս

- թռչնի միս (հավ, հնդկահավ, սագ, բաղ՝ ամբողջական մսեղիքով) - 1.0 տոկոս

2. Սառեցված միսը սառնարանում պահպանելիս

| ՄՍԵՂԻՔԸ | Կորստի չափը տոկոսներով |
|--|---------------------------|
| Տավարի երկատված, քառատված կամ մասնագիտացված մսեղիք | 0.55 |
| Ոչխարի և այծի ամբողջական և երկատված մսեղիք | 0.65 |
| Խոզի ամբողջական և երկատված մսեղիք | 0.35 |
| Թռչնի միս (հավ, հնդկահավ, սագ, բաղ՝ ամբողջական մսեղիքով) | 0.30 |